



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ,
ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԱՐՄՎԻՐԻ ՄԱՐԶԻ «ՋՐԱՇԵՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ
(2023-2028 ԹԹ.)

ԴՊՐՈՑԻ ԳՈՐԾԱԴԻՐ ՏՆՕՐԵՆԻ ՊԱՇՏՈՆԻ ՀԱՎԱԿՆՈՐԴ՝
ՀՐԱՆՈՒՇ ՍԱՄՎԵԼԻ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Սույն զարգացման ծրագիրը կազմվել է ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի՝ 2022թ. սեպտեմբերի 22-ի «Պետական հանրակրթական ուսումնական հաստատության զարգացման ծրագրի մշակման ձևաչափը և զարգացման ծրագրի կատարման ամենամյա հաշվետվության կատարողական ցուցանիշներն ու պահանջները հաստատելու և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2021 թվականի հունվարի 15-ի N°16-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N°35-Ա հրամանով հաստատված ձևաչափին և պահանջներին համապատասխան:

Զարգացման ծրագրի բովանդակությունը

Ներածություն	4
1. Դպրոցի առաքելությունը.....	6
1.1 Ի՞նչ կրթական կարիքներ է բավարարում ուսումնական հաստատությունը.....	8
1.2 Ի՞նչ ռեսուրսներ են առկա առաքելության իրագործման համար.....	14
1.3 Ուսումնական հաստատության ենթակառուցվածքները, մարդկային ռեսուրսները և հնարավորությունները.....	17
1.4 Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող ներքին գործոնները	21
1.5 Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող արտաքին գործոնները	22
2. Ուսումնական հաստատության իրավիճակի վերլուծություն, հիմնախնդիրների սահմանում.....	23
3. Ուսումնական հաստատությունում առկա հիմնախնդիրները՝ ըստ առանձին ուղղությունների.	31
4. Նպատակների, խնդիրների և ակնկալվող արդյունքների սահմանում.....	33
5. Նպատակների և խնդիրների իրականացման ժամանակացույց.....	35
6. Զարգացման ծրագրի կատարման արդյունքի գնահատման չափանիշներ	49
7. Ծրագրի գնահատման չափանիշներն ու վերահսկողությունը	58
Հավելված	59

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Արմավիրի մարզի «Ջրաշենի միջնակարգ դպրոց» պետական ոչ առևտրային կազմակերպության (այսուհետ՝ Դպրոց կամ Ուսումնական հաստատություն) զարգացման ծրագիրը հանդիսանում է Դպրոցի հիմնական ռազմավարական փաստաթուղթը: 2023-2028 թվականների դպրոցի զարգացման հիմնական ուղղություններն են՝

- Արդի պետական, կրթական քաղաքականության պահանջներին համապատասխանությունը,
- Կրթական հաստատության ինքնազարգացման ներուժը:

Հաշվի առնելով հանրակրթական ոլորտի բարեփոխումների ներկա փուլի հիմնական խնդիրները և մարտահրավերները՝ ծրագիրն իր մեջ ներառում է մի շարք բարեփոխումներ, որոնք իրենց մեջ պարունակում են կրթության որակը պայմանավորող գրեթե բոլոր գործոնները՝

- մարդկային ռեսուրսներ,
- ծրագրային մեթոդաբանության ապահովում,
- նորմատիվ իրավական դաշտի առկայություն,
- չափորոշչային նոր պահանջներ:

Կրթության բնագավառում պետական քաղաքականության հիմքը ազգային դպրոցն է, որի գլխավոր նպատակը՝ ***մասնագիտական պարշաճ պատրաստվածություն և մասնագիտական կողմնորոշում ունեցող, համակողմանիորեն զարգացած, հայրենասիրության, պետականության և մարդասիրության ոգով դաստիարակված անձի ձևավորումն է:***

Ծրագրի իրավական հիմքերն են՝ «Հայաստանի Հանրապետության Սահմանադրությունը», «Կրթության մասին», «Հանրակրթության մասին», «Լեզվի մասին», «Երեխայի իրավունքների մասին», «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին», «Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող անձանց կրթության մասին», «Նախադպրոցական կրթության մասին», «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասին», «Լիցենզավորման մասին», «Կրթության պետական տեսչության մասին», «Տեղական ինքնակառավարման

մասին», «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին», «Վարչարարության հիմունքները և վարչական վարույթի մասին», «Գնումների մասին», «Իրավական ակտերի մասին», «ՀՀ օրենքները», «ՀՀ աշխատանքային օրենսգիրքը», «ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը», «Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգիրքը», «Կրթության բնագավառը կարգավորող հարկային օրենսդրությունը», «ՀՀ պետական հանրակրթական ուսումնական հաստատության պետական ոչ առետրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը», «Հանրակրթության պետական չափորոշիչը», «ՀՀ հանրակրթական ուսումնական հաստատության գործունեության ներքին և արտաքին գնահատման չափանիշները և իրականացման կարգը», «Հանրակրթական ուսումնական հաստատության կառավարմանը վերաբերող կրթության կառավարման լիազոր մարմնի (այսուհետ՝ նախարարություն) համապատասխան նորմատիվ իրավական ակտերը» և այլ փաստաթղթեր:

Հանրակրթության համակարգում տեղի են ունենում համակարգային փոփոխություններ, որոնք պայմանավորված են ոչ միայն ազգային առանձնահատկություններով, այլև համաշխարհային զարգացումներին բնորոշ՝ աշխարհաքաղաքական, ժողովրդագրական, մշակութային, սոցիալական և տեխնոլոգիական գործոններով:

Դպրոցի առաքելությունը

Կրթությունը անձի, հասարակության և պետության շահերից ելնող ուսուցման և դաստիարակության գործընթաց է, որը նպատակաուղղված է գիտելիքները պահպանելուն և այն սերունդներին փոխանցելուն: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգը նպատակաուղղված է հայ ժողովրդի հոգևոր և մտավոր ներուժի ամրապնդմանը, ազգային և համամարդկային արժեքների պահպանմանն ու զարգացմանը:

Դպրոցի առաքելությունն իրականացնելիս՝ սահմանել ենք հետևյալ կետերը՝

1. Յուրաքանչյուր շահառուի կյանքում առավելագույնս ազդեցություն ունենալ՝ սկսած ֆունկցիոնալ գրագիտությունից մինչև հնարավորությունների բացահայտում, գիտելիքի արժևորում և կիրառում, անհրաժեշտ կարողունակությունների ձևավորում:
2. Յուրաքանչյուր երեխայի համար ստեղծել կրթական միջավայր, բարոյահոգեբանական առողջ մթնոլորտ, առանձնահատուկ ուշադրության կենտրոնում պահել օժտված, ընդունակ, կամ որևէ բնագավառում հետաքրքրություն դրսևորած աշակերտին ընդգրկել խմբակներում, խթանել նրա նախասիրությունները:
3. ԿԱՊԿՈՒ և ներառման կարիք ունեցող աշակերտի համար, իր զարգացման առանձնահատկություններին համարժեք կրթություն ապահովել, ձևավորել համապատասխան միջավայր:
4. Ապահովել համայնքի ներգրավվածությունը՝ կրթական որակի բարելավման նպատակով, համագործակցության և փոխվստահության ակնկալիքով:
5. Ձևավորել ինքնուրույն, գրագետ, համարձակ իր կարողությունների մեջ, սեփական տեսակետը բարձրաձայնող, քննարկելու, խոսելու և համագործակցելու պատրաստ անհատ, ով համարժեք գնահատում է իրավիճակը, սեփական հնարավորությունները և պատրաստ է լուծումներ գտնել և իրագործել դրանք:
6. Կրթել ու դաստիարակել այնպիսի սերունդ, որը իր մեջ կրում է մասնակցային մշակույթը և արժևորում յուրաքանչյուր անհատի դերը:

7. Դաստիարակել հայ, ով բազմազգ մոլորակում գիտակցի իր ազգային յուրահատկությունը, մշակույթի բացառիկությունը և գիտակցի իր՝ պահպանողի և փոխանցողի դերը, ձևավորել անհատականություն, ով կգիտակցի հայրենիքի և պետականության արժեքը:

8. Կրթության մեջ առաջնահերթություն տալ ուսուցման պրակտիկ ուղղվածությանը, որպեսզի սովորողը կարողանա ձեռք բերված գիտելիքներն ու կարողությունները կիրառել գործնականում, ուսումնառության ընթացքում զարգացնել ստեղծագործական աշխատանքներ կատարելու կարողությունը:

9. Նպաստել սովորողների հաղորդակցական կարողությունների ձևավորմանը: Այս որակն իր մեջ ներառում է լեզուների, մարդկանց հետ շփման տարբեր եղանակների իմացություն, խմբային աշխատանքի, կոլեկտիվում տարբեր դերեր կատարելու կարողություններ: Կազմակերպել սովորողների ուսուցումը՝ սովորողի նախասիրություններին և կարողություններին համապատասխան:

1.1 Ի՞նչ կրթական կարիքներ է բավարարում ուսումնական հաստատությունը

Ուսումնական հաստատության տեսլականն է՝ ունենալ համակողմանիորեն զարգացած, մասնագիտորեն կողմնորոշված, ազգային արժեքներ կրող, հայրենասեր ու պետականամետ, գլոբալիզացիայի մարտահրավերներին պատրաստ, համաշխարհային աշխատաշուկայում կողմնորոշվող և մրցունակ, մարդասիրության ոգով դաստիարակված, համամարդկային հիմնարար արժեքները կրող կոմպետենտ քաղաքացիներ:

Ուսումնական հաստատության գործունեության նպատակը՝ յուրաքանչյուր երեխայի, այդ թվում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈԻ), զարգացման առանձնահատկություններին համապատասխան կրթական գործընթացին առավելագույն մասնակցության և հանրակրթության պետական չափորոշչով սահմանված արդյունքների ապահովումն է:

Ուսումնական հաստատության գործունեությունը հիմնվում է ժողովրդավարության, մարդասիրության, հանրամատչելիության, թափանցիկության, անձի ազատ զարգացման, ինքնավարության և կրթության աշխարհիկ բնույթի պահպանման, ինչպես նաև ազգային և համամարդկային արժեքների զուգորդման սկզբունքների վրա:




Դպրոցն ուղղված է սովորողների ընդհանուր և հատուկ կրթական կարիքների բավարարմանը, ինչն իրականացվում է տարբեր ուղղություններով և մակարդակներում.

- **Կառավարում.** ուղղված է սովորողների կրթական կարիքների բավարարմանն ուղղված գործողությունների ընթացքի մշակմանն ու արդյունավետ իրագործմանը՝ ըստ հանրակրթության
- **Ուսումնադաստիարակչական աշխատանքներ.** համարվում են սովորողների կրթական կարիքների բավարարման բուն գործընթացը, իրականացվում են մանկավարժական անձնակազմի կողմից՝ ընդգրկելով ինչպես բուն ուսումնական պրոցեսը, այնպես էլ հարակից սոցիալական և մարզամշակութային միջոցառումները, առանձին սեմինար-քննարկումներն ամենատարբեր հարցերի շուրջ,
- **Վարչատնտեսական գործունեություն.** ուղղված է ուսումնական գործընթացի կազմակերպման համար նպաստավոր միջավայրի պահպանմանն ու զարգացմանը՝ Դպրոցի հնարավորությունների օբյեկտիվ գնահատման հիման վրա,
- ✓ **Աշխատանքներ ԿԱՊԿՈՒ սովորողների հետ.** իրականացվում են դպրոցի հոգեբանի և ուսուցչի օգնականների և Արմավիրի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի մասնագետների հետ ակտիվ համագործակցությամբ:


Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2010թ. դեկտեմբերի 22-ի N°1727 Ա/Ք հրամանով տրված լիցենզիաների՝ Դպրոցն իրավունք ունի՝ իրականացնելու տարրական, հիմնական և միջնակարգ ընդհանուր կրթական ծրագրեր՝ աշակերտների հետևյալ սահմանափակումով.

Գծապատկեր 1. Դպրոցի կողմից իրականացվող ընդհանուր կրթական ծրագրերը




Դպրոցի կողմից իրականացվող ընդհանուր կրթական ծրագրերը Համաձայն ՀՀ կրթության և գիտության նախարարի 2009թ. հուլիսի 9-ի N 808-Ն որոշմամբ հաստատված N103/2-27 հրամանով տրված լիցենզիայի՝ Դպրոցն իրավունք ունի՝ իրականացնելու նաև նախադպրոցական կրթական ծրագիր, մինչև 20 երեխայի համար.

Գծապատկեր 2. Դպրոցի կողմից իրականացվող նախակրթական ծրագիրը



Գծապատկեր 3. Դպրոցի աշակերտների թիվը, 2018-2023թթ.




Կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունի՝ 4 աշակերտ (**կրթության առանձնահատուկ պայմանների կարիք՝ 1-ին աստիճան - 1աշակերտ, 2-րդ աստիճան - 2 աշակերտ , 3-րդ աստիճան - 1աշակերտ**), որոնց հետ տարվում է աշխատանք, ըստ գնահատված կարիքի, Տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի հոգեբանի և ուսուցչի օգնականի կողմից:

Դպրոցում սովորում է 35 այլազգի (եզդի) աշակերտ: Ուսումնական գործընթացում ազգային պատկանելիության հիմքով խտրականության ցանկացած դրսևորում բացառվում է: Հավասարությունը երաշխավորված է, և՛ առօրյա կյանքում, և՛ Դպրոցի անձնակազմ-աշակերտ, և՛, աշակերտ-աշակերտ հարաբերություններում:

Իրավապահ մարմինների ներկայացուցիչների, տնօրենի տեղակալի, դասղեկների կողմից հետևողական աշխատանքներ են տարվում սովորողների իրավունքների և պարտականությունների ներկայացման և արդյունավետ իրացման ուղղությամբ: Կազմակերպվում են առանձին հանդիպում-քննարկումներ, որոնց շրջանակներում հատուկ ուշադրություն է դարձվում հալածանքի՝ բուլինգի (այդ թվում՝ մեդիայի միջոցով), օտարման և բռնության դրսևորումների բացառմանը, Դպրոցում բարոյահոգեբանական առողջ մթնոլորտի պահպանմանը: Չնայած սովորողների բարձր առաջադիմությանը՝ Դպրոցի առաջ խնդիր է դրված՝ բարձրացնելու սովորողների ուսման որակը:

Գծապատկեր 4. Սովորողների առաջադիմությունը և որակը, 2018-2023թթ., տոկոս



Դպրոցն ընդգրկվել է Պարենի համաշխարհային ծրագրի հայաստանյան գրասենյակի աջակցությամբ իրականացվող «Դպրոցական սնունդ» ծրագրում: 2023-2024թթ կազմակերպվելու է նախակրթարանի և տարրական դպրոցի սովորողների համար ամենօրյա տաք սննդի ապահովում:

Դպրոցը աշակերտների համար ապահովում է հետևյալ հնարավորությունները՝

- ✓ որակյալ և ժամանակակից կրթություն,
- ✓ յուրաքանչյուր աշակերտի կարողությունների համապատասխան՝ անձի զարգացում ,
- ✓ մասնագիտական կողմնորոշում,
- ✓ մարզամշակութային կյանքի ներգրավածություն:

2023-2024 ուստարուց սովորողների ուսումնադաստիարակչական աշխատանքներում ընտանիքին համակողմանի օգնություն ցուցաբերելու, դասապատրաստումներին աջակցելու, ինքնուրույն սովորելու կարողությունները, ստեղծագործական ունակությունները զարգացնելու նպատակով նախատեսվում է Դպրոցում կազմակերպել երկարօրյա ուսուցում՝ սովորողների և նրանց ծնողների կարիքների ուսումնասիրության հիման վրա:

Դպրոցում երկարօրյա ուսուցման կազմակերպման առջև դրվելու են հետևյալ խնդիրները.

1. տնային պայմաններում երեխայի կրթական աջակցության անհնարինության դեպքում այդ գործընթացները կազմակերպել դպրոցի ուսումնանյութական բազայի հիման վրա, այդ թվում՝ այլ հանրակրթական ուսումնական հաստատություններ հաճախող սովորողների համար,

2. արտադասարանական աշխատանքներին սովորողների ակտիվ մասնակցության ապահովման միջոցով ստեղծել երեխայի ստեղծագործական ունակությունների զարգացման անհրաժեշտ պայմաններ,

3. ԿԱՊԿՈՒ (այդ թվում՝ ցածր առաջադիմությամբ) սովորողների համար մատուցել լրացուցիչ կրթական ծառայություններ:

Նոր ուստարում 2-րդ, 5-րդ, 7-րդ և 10-րդ դասարանների ուսումնական պլանը կազմվելու է ՀՀ կառավարության 2021 թվականի փետրվարի 4-ի N 136-Ն որոշմամբ նոր խմբագրությամբ շարադրված հանրակրթության պետական չափորոշի համաձայն, իսկ այդ դասարաններում դասավանդող ուսուցիչները արդեն անցել են համապատասխան վերապատրաստում:

Դպրոցի և համայնքի համագործակցությամբ կազմակերպվում են միջոցառումներ, հանդիպումներ, սեմինար-քննարկումներ, ճանաչողական էքսկուրսիաներ, շաբաթօրյակներ, որոնք նպաստում են սովորողների սոցիալական-քաղաքացիական պատասխանատվության և կարողունակության զարգացմանը, սովորողների մոտ վաղ տարիքից ձևավորում են պետության և համայնքի նկատմամբ հոգատար վերաբերմունք:

1.2 Ի՞նչ ռեսուրսներ են առկա առաքելության իրագործման համար

- 1) Նորագույն տեխնոլոգիաների կիրառում որակյալ կրթություն ստանալու համար,
- 2) Սովորողի կրթական կարիքի գնահատում և բավարարում,
- 3) Համայնքի հետ ակտիվ համագործակցություն,
- 4) Կրթություն բոլորի համար, որտեղ կարող են սովորել յուրաքանչյուրը, իր կարողություններին համամպատասխան, այդ թվում՝ ԿԱՊԿ ,
- 5) Սովորողների տեղեկացվածությունը Հայաստանյան և համաշխարհային աշխատաշուկային,
- 6) Մասնակցային և համագործակցային աշխատանքային մթնոլորտ՝ դպրոց-ծնողական համայնք սերտ համագործակցությամբ,
- 7) Աշակերտների մտավոր զարգացման պայմաններ, յուրաքանչյուր երեխա ունակ է սովորելու, սակայն յուրաքանչյուրն ունի զարգացման իր հետագիծը
- 8) Օժտված երեխաներին՝ տարբերակված, խորացված ուսուցման կազմակերպման համար բարենպաստ պայմանների ստեղծում:
- 9) Սովորողների արժեհամակարգի ձևավորում՝ ունենալով ավանդույթներով հարուստ բազմամյա պատմություն, առաջացնելով հետաքրքրություն նորի և հարգանք՝ անցյալի նվաճումների նկատմամբ:

- 10) Համայնքի հետ ակտիվ համագործակցող, համայնքի սոցիալ-մշակութային կենտրոն հանդիսացող դպրոցի ձևավորում:
- 11) Հետագա կյանքում սովորողների ինքնահաստատման համար անհրաժեշտ կոմպետենցիաների ձեռքբերման բարենպաստ կրթական միջավայրի ապահովում:

ԴՊՐՈՑԻ ՏԵՍԼԱԿԱՆԸ: Մինչև 2028 թվականը դառնալ հասարակության, տնտեսության, պետության զարգացման պահանջներին համապատասխան, տեսական ու կիրառական գիտելիքներով, գործնական հմտություններով ու ժամանակակից նորարարական կարողություններով օժտված առաջատար հանրակրթական դպրոցներից մեկը՝ Հայաստանի Հանրապետությունում:

Տեսլականը կդառնա իրականություն հետևյալ քայլերն իրականացնելու պարագայում՝

- ✗ Բարենպաստ կրթական միջավայրի ապահովում յուրաքանչյուր սովորողի համար.
- ✗ Հոգևոր-մշակութային բարձր արժեքների ուսուցանում.
- ✗ Ռազմահայրենասիրական դաստիարակության պատշաճ կազմակերպում.
- ✗ Ուսման բարձր որակի ապահովում, արդյունավետ և արդիական կրթության իրականացում:

Այս ամենի իրականացման գլխավոր երաշխիքը դպրոցի ճիշտ, արհեստավարժ կառավարումն է, որի արդյունավետությունը կախված է դպրոցի տնօրենի անհատական առանձնահատկություններից և պատաստվածությունից:

Առաքելությունն իրատեսական դարձնելու գրավականներն են՝

- ✓ Փորձառու մանկավարժական համակազմը,
- ✓ Մասնակցային և համագործակցային աշխատանքը,
- ✓ Համընդհանուր ներառական կրթության իրականացումը,
- ✓ Հոսքային ուսուցման արդյունավետ կազմակերպումը,

- ✓ Կրթության որակի բարելավմանը միտված շարունակական, միջոցառումները՝ սեմինարներ, վեբինարներ, վերապատրաստումներ,
- ✓ Կրթության կազմակերպման միջավայրի շարունակական բարելավումը,
- ✓ Դպրոցի ակտիվ ներգրավվածությունը սոցիալ-մշակութային միջոցառումներում,
- ✓ Արտադասարանական միջոցառումներում սովորողների ներգրավվածությունը (ճանաչողական այցեր, մասնագիտական կողմնորոշման նպատակով հանդիպումներ, բանավեճեր, քննարկումներ և այլն),
- ✓ Դպրոցում ձևավորել ավանդույթներ՝ խրախուսման միջոցներ.
 1. տարվա աշակերտներ, տարվա շրջանավարտներ անվանակարգում,
 2. շնորհակալագրեր՝ դպրոցասիրության և դպրոցը լավագույնս ներկայացնելու համար,
 3. շնորհակալագրեր՝ հայրենիքի պաշտպանությանը մասնակցած շրջանավարտներին՝ դպրոցի սերմանած հայրենասիրական դաստիարակությանը հավատարիմ մնալու և հայրենիքի հանդեպ պարտքը պատվով կատարելու համար:
- ✓ Սովորողների մասնակցությունը դպրոցական, մարզային և հանրապետական մրցույթներին, օլիմպիադաներին:

Կարողունակություններ, որոնք անհրաժեշտ են 21-րդ դարի դպրոցի տնօրենին.

- Մանկավարժին և սովորողին արժևորելու կարողություն,
- Աշխատակիցներին ճիշտ գնահատելու և հոգեբանությունը հասկանալու կարողություն,
- Արդարացի և թափանցիկ խրախուսման կարողություն,
- Ուսումնական միջոցները խնայելու ի նպաստ ծառայեցնելու կարողություն,
- Վերլուծելու և սինթեզելու կարողություն,
- Ինֆորմացիայի հետ աշխատելու կարողություն ,
- Հետազոտելու կարողություն ,
- Ձեռնարկատիրական կարողություններ ,
- Խնդիրները լուծելու կարողություն ,

- Անընդհատ սովորելու կարողություն,
- SCS կիրառելու կարողություն,
- Ծրագրային առաջնորդական թիմ ստեղծելու կարողություն ,
- Հաղորդակցման կարողություն,
- Ուսումնական միջոցները խնայելու ի նպաստ ծառայեցնելու կարողություն:
- Դպրոցում աշխատում է իր գործին գիտակ մանկավարժական թիմ՝ պատրաստ միմյանց աջակցելու, համագործակցելու, ինքնակրթվելու և կրթելու:

1.3. Ուսումնական հաստատության ենթակառուցվածքները, մարդկային ռեսուրսները և հնարավորությունները

Ուսումնական հաստատության շենքային պայմանները.

Դպրոցի շենքը, տիպային երկմասնաշենք կառույց է՝ 385 աշակերտ նախագծային հզորությամբ և հարմարեցված կրթական ծրագրեր իրականացվող ուսումնական հաստատությունների պահանջներին:

Դպրոցը ունի՝

- 1) 16 - առարկայական կաբինետ (այդ թվում՝ 1 համակարգչային և 1 նախնական զինպատրաստության),
- 2) 7 - դասասենյակ,
- 3) 2 - առանձնասենյակ,
- 4) 1 - գրադարան-ընթերցասրահ,
- 5) 2 - լաբորատորիա,
- 6) 2 - ական սանհանգույց ,
- 7) 2 -ական հանդերձարան,
- 8) սպորտդահլիճ , զենքի պահեստ, ճաշարան:

Ուսումնական հաստատությունն ապահովված է եռաֆազ հոսանքով և ջեռուցումը իրականացվում է ինքնաշեն էլեկտրական սալիկներով :

Դպրոցի շենքային պայմանները գտնվում են վատ վիճակում, ամբողջությամբ վերանորոգվելու կարիք կա (տե՛ս հավելված), միայն վերանորոգված է նախակրթարանը և ճաշարանը, որը պետք է շահագործվի 2023-2024 թվականին: Ուսուցման կազմակերպման ենթակառուցվածքները (լաբորատորիաներ, մարզադահլիճ, առարկայական կաբինետներ), գտնվում են վատ վիճակում և ունակ չեն ապահովելու ուսուցման պրոցեսի բնականոն ընթացքը: Դպրոցը չունի ջրամատկարարում, ապահովված չէ կենտրոնացված ջեռուցմամբ և ինտերնետային կապով :

Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազան.


Ուսումնական հաստատությունը կրթական ծրագրեր իրականացնելու համար անհրաժեշտ նյութատեխնիկական բազա չունի: Դպրոցի գույքը շատ հնամաշ է: Առկա նյութատեխնիկական բազան գտնվում է սարքին վիճակում և դեռ ենթակա է շահագործման:

Անվանում	Քանակ
Համակարգիչ	2
Լուսացրիչ	2
Նոթբուք	3
Տպագրական սարք	1
Պլանշետ	3

Դպրոցի մարդկային ռեսուրսները.

Ուսումնական հաստատությունն ունի 36 աշխատակից: 3 ուսուցիչ ունի միջին մասնագիտական, մնացածը՝ բարձրագույն մասնագիտական կրթություն և ատեստավորված են:

Գծապատկեր 5. Դպրոցի մարդկային ռեսուրսները՝ 2023թ



Ուսումնական հաստատության խորհրդակցական մարմինները.

Ուսումնական հաստատության կառավարման գործում ներգրավված են կառավարման և խորհրդակցական հետևյալ մարմինները, որոնք գործում են օրենսդրությամբ և Ուսումնական հաստատության կանոնադրությամբ նախատեսված իրենց իրավասությունների սահմաններում.

- 📖 կառավարման խորհուրդ,
- 📖 մանկավարժական խորհուրդ,
- 📖 ծնողական խորհուրդ (12 հոգի),

աշակերտական խորհուրդ:

Դպրոցի կառավարման խորհուրդն ակտիվորեն ներգրավված է Դպրոցի կառավարման հարցում, երաշխավորված է տնօրեն-կառավարման խորհուրդ արդյունավետ համագործակցությունը: Կառավարման խորհրդի նիստերի շրջանակներում Դպրոցի տնօրենը կներկայացի և կքննարկվեն՝

- I. ամենամյա ծախսերի նախահաշիվը և հաջորդ բյուջետային տարվա ֆինանսավորման հայտը,
- II. հաստիքային և տարիֆիկացիոն ցուցակները,
- III. ֆինանսատնտեսական, ուսումնադաստիարակչական գործունեության, այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման մասին հաշվետվությունները,
- IV. Դպրոցի զարգացման ծրագրի կատարողականը: 2023-2028թթ.

Դպրոցի տնօրեն-կառավարման խորհուրդը համագործակցությունն իրականացվելու է կողմերի վերանայված լիազորությունների շրջանակներում՝ «Հանրակրթության մասին» ՀՀ նոր օրենքի շրջանակներում:

Նախատեսվում են խորհրդի աջակցությամբ զարգացման ծրագրի կատարումը, Դպրոցի կազմակերպական կառուցվածքի, ներքին կարգապահական, (այդ թվում՝ աշխատողների և սովորողների վարքագծի) կանոնների հաստատումը, ուսումնադաստիարակչական գործունեության (այդ թվում՝ մանկավարժահոգեբանական աջակցության ծառայությունների իրականացման) մասին հաշվետվությունների, ներքին և արտաքին գնահատման արդյունքների քննարկումը:

Ուսումնական հաստատության ֆինանսական գործունեությունը.

Դպրոցի ֆինանսական գործունեությունը 2018թ-ից 2023թ-ի համար եղել է 47-49 մլմ. դրամ միաջակայքում: Որից՝ ըստ ծախսման ուղղությունների բաշխվել է հետևյալ կերպ.

	2018-2019թթ		2019-2020թթ		2020-2021թթ		2021-2022թթ		2022-2023թթ	
	գումար մլն. դրամ	%	գումար մլն. դրամ	%	գումար մլն. դրամ	%	գումար մլն. դրամ	%	գումար մլն. դրամ	%
Աշխատավարձ	43,7	91	44,2	92	43,2	90	44,2	92	44,4	92,5
Էլեկտրաէներգիա և դիզ վառելիք	1,3	2,8	1,5	3,1	1,8	3,8	1,7	3,5	1,6	3,4
Այլ ծախսեր	3,0	6,2	2,4	4,9	3,0	6,2	2,2	4,5	2,0	4,1
Ընդամենը	48	100	48	100	48	100	48	100	48	100

Քանի որ հստակ տվյալ չունենք, թե դպրոցի բյուջն կոնկրետ, որ տարում ինչքան է եղել և տվյալները տրամադրվել է տոկոսային կետերով, ուստի գումարային մեծությունը ստանալու համար վերցրել ենք վերոնշյալ միջակայքի միջին թվաբանականը՝ 48 մլն. դրամը:

1.4 Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող ներքին գործոնները

Դրական	Բացասական
1. Առաքելության իրագործման գործընթացում կրթական գործընթացի մասնակիցների (ծնողական համայնք, կառավարման, ղեկավարման մարմիններ, համայնքի, հասարակության ակտիվ խմբեր)՝ ակտիվ ներգրավումը, 2. Մարդկային, նյութական, ժամանակային ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը , 3. Արդյունավետ ղեկավարումը:	1. Կրթական գործընթացի մասնակիցների իներտ, պասիվ վերաբերմունքը , 2. Առաքելության նկատմամբ թերահավատությունը, 3. Վարչական և մանկավարժական աշխատողների կազմակերպչական հմտությունների պակասը, 4. Միանձնյա, ոչ թափանցիկ ղեկավարումը:

Թվարկված ռիսկերը նվազեցնելու համար անհրաժեշտ է՝ բոլոր հնարավոր ռիսկերի կանխատեսում և գնահատում, ռիսկերի կառավարման գործողությունների ճիշտ պլանավորում և գործողությունների համակարգված իրականացում:

1.5 Առաքելության իրագործման վրա էական ազդեցություն ունեցող արտաքին գործոնները

Դրական	Բացասական
1) Պետության կրթական քաղաքականության՝ կրթության որակի բարձրացմանը միտված՝ նորարարական և արդյունավետ մոտեցումների ներդրումը Երկրի տնտեսական աճով պայմանավորված՝ կրթության գծով պետական ֆինանսավորման չափաքանակի ավելացումը : 2) Համայնքի՝ կրթության որակի բարձրացմանն ուղղված գործողությունների կարևորումը և ակտիվ մասնակցությունն ու աջակցությունը դպրոցի կրթական գործընթացի կազմակերպմանը: 3) Լիազորված մարմինների կողմից դպրոցին տարբեր ծրագրերում ներգրավելը : 4) Բարեգործական հիմնադրամների հետ համագործակցությունը:	1) Դրական գործոնների բացակայությունը կամ ոչ լիարժեք առկայությունը : 2) Համաճարակներով պայմանավորված սահմանափակումները :

2. ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ. ՈՒԺԵՂ ԵՎ ԹՈՒՅԼ ԿՈՂՄԵՐ, ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Ուժեղ կողմեր	Թույլ կողմեր
Ուսումնական հաստատության շենքային պայմանները	
1) Ուսումնական հաստատությունն ապահովված է կրթական գործունեության ապահովման համար անհրաժեշտ լուսավոր, ընդարձակ և հարմարավետ շենքային պայմաններով: 2) Դպրոցն ունի ճաշարան ու խոհանոց՝ տաք սնունդ տրամադրելու համար, որին մասնակցում է տարրական դպրոցի և նախակրթարանի 60 սան. շահագործման է հանձնվելու 2023-2024թ: 3) Եռաֆազ հոսանքի մատակարարում: 4) Վերանորոգված նախակրթարան: 5) Հիմնովին վերանորոգված տանիք:	1) Դպրոցի երկու բակն ունի վերանորոգման կարիք, տարածքի ցանկապատի բացակայություն: 2) Դպրոցը չունի շուրջօրյա ջրամատակարարման և ջրահեռացման համակարգեր: 3) Դպրոցը ամբողջությամբ վերանորոգելու խիստ անհրաժեշտություն կա : 4) Դպրոցի ապաստարանը հիմնանորոգման կարիք ունի և ընդարձակ չէ: 5) Կրթական գործունեության կազմակերպման համար առկա չեն հիմնանորոգված դասասենյակներ և կաբինետներ, սպորտդահլիճ և մարզադաշտ՝ հանդերձարաններով, համակարգչային կաբինետներ, դահլիճ, մասնագիտացված ՆԶՊ և առարկայական կաբինետներ, լաբորատորիաներ, գրադարան-ընթերցասրահ, աշխատասենյակներ վարչական աշխատողների համար. բոլոր կաբինետներն ու սենյակները անհրաժեշտ են հիմնովին նորոգել , ձևավորել ու կահավորել նոր գույքով: 6) Առկա չեն ջեռուցման և շուրջօրյա տեսահսկողության համակարգեր, ինտերնետային

	կապ: 7) Բոլոր դասասենյակների գույքի ապահովում: Ճաշարանի սեղան աթոռները չեն համապատասխանում աշակերտների տարիքին : 8) Դպրոցում համակարգչային կաբինետի վերանորոգման և համապատասխան քանակի համակարգիչներով ապահովված կարիք կա : 9) Երկհարկանի դպրոցը սանհանգույց ունի միայն 1-ին հարկում: 10) Բուժկետ չկա , դասասենյակների և միջանցքների հատակները հիմնականում բետոնապատ են: 11) Ռազմագիտության կաբինետի նոր պաստառների և ուսումնամարզական գույքի բացակայություն 12) Հանդիսությունների և միջոցառումների սրահի բացակայություն, մարզադահլիճի անմխիթար վիճակ, մարզական գույքի պակաս, հակահրդեհային պահանջներին համապատասխան սարքավորումների պակաս, բուժետի բացակայություն, կոյուղագծի և արհեստանոցի վերանորոգում : 13) Դպրոցին խիստ անհրաժեշտ են աշակերտական սեղաններ:
Ուսումնական հաստատության նյութատեխնիկական բազան	
1) Ուսումնական հաստատությունը կրթական ծրագրեր իրականացնելու համար առկա են 2 համակարգիչ, 3 դյուրակիր համակարգիչ (նոթբուք): 2) Դպրոցի տարրական դպրոցի և նախակրթարանի	1) Գրադարանը կարիք ունի նոր (այդ թվում՝ օտարալեզու) գրականությամբ հագեցվածության: 2) Գրադարանում մասնագիտական գրքերի պաշարի կարիք ունի :

սաների համար կազմակերպվում է ամենօրյա տաք սննդի տրամադրում, որի նպատակով հատկացվել և կահավորվել են խոհանոց, ճաշարան և սննդի պահեստ: Առկա են սառնարաններ, գազօջախներ, պահարաններ, սեղաններ, աթոռներ, լվացարաններ, ջեռոց, խմորհունց և այլն:

- 3) Թվային գրականության հասանելիությունն ապահովելու նպատակով՝ ընթերցասրահի համար անհրաժեշտ է ձեռք բերել նոր համակարգիչներ:
- 4) Ժամանակակից դասապրոցեսի կազմակերպման անհրաժեշտության աճին զուգահեռ՝ Դպրոցն ունի նոր համակարգչային տեխնիկայի ձեռք բերման կարիք:

Համագործակցությունը Ուսումնական հաստատության կառավարման և խորհրդակցական մարմինների հետ

- 1) Դպրոցի կառավարման խորհրդի անդամները առաջադրվել են լիազորված մարմնի, մանկավարժական խորհրդի, ծնողական խորհրդի և ՏԻՄ ղեկավարի կողմից, ինչի շնորհիվ երաշխավորված են խորհրդի ինքնավարությունը, իր գործողություններում ազատ լինելու հնարավորությունը և անկաշկանդվածությունը:
- 2) Դպրոցի կառավարման խորհուրդն ակտիվորեն ներգրավված է Դպրոցի կառավարման գործում, կազմակերպվում են խորհրդի նիստեր, որոնց ընթացքում քննարկվում են Դպրոցի կառավարման օրակարգային հարցերը:
- 3) Դպրոցի տնօրենը ներկայացնում, և կառավարման խորհուրդը քննարկում է Դպրոցի գործունեությանը վերաբերող հարցեր:
- 4) Կառավարման խորհուրդը զարգացման ծրագրի կատարման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում:

- 1) Դպրոցը չունի շրջանավարտների խորհուրդ:
- 2) Դպրոցը չունի հոգաբարձուների խորհուրդ:
- 3) Աշակերտական խորհուրդը ակտիվ չէ՝ սեփական նախաձեռնություններով հաճախ հանդես չի գալիս:

5) Դպրոցի մանկավարժական խորհուրդը ակտիվորեն ներգրավված է հանրակրթության պետական չափորոշիչին համապատասխան հանրակրթական ծրագրերի իրականացման գործում, հայտնում է իր դիրքորոշումը ուսումնական գործընթացին վերաբերող հարցերի առնչությամբ, ընդունում որոշումներ օրակարգային հարցերի մասին: 6) Դպրոցի ծնողական խորհուրդը ապահովում է ծնողների ներգրավվածությունը սովորողների արտադպրոցական աշխատանքներում, երաշխավորում է դպրոցում երեխայի իրավունքների պաշտպանությունը : 7) Դպրոցի աշակերտական խորհուրդը, լիազորություններին համապատասխան, ներգրավված է Դպրոցի գործունեության կազմակերպման գործում, երաշխավորված են սովորողներին վերաբերող հարցերի շուրջ աշակերտական խորհրդի՝ ազատ կարծիք հայտնելու և կամաարտահայտության իրավունքները:	
Ուսումնական հաստատության համագործակցությունը ՏԻՄ-ի, ծնողական համայնքի, կրթության կառավարման մարմինների, շահառու կազմակերպությունների հետ	
1) Ուսումնական հաստատությունը համագործակցում է ՀՀ կառավարության, ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության, Արմավիրի մարզպետի աշխատակազմի, Մեծամորի համայնքապետարանի, Ջրաշեն գյուղի վարչական	1) Համայնքային մակարդակում կրթական և մարզամշակութային նախաձեռնությունների սահմանափակ թիվ: 2) Ծնողական համայնքը պասիվ է, չունի բավարար սեփական նախաձեռնողականություն,

ղեկավարի, ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության, ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության, ՀՀ պաշտպանության նախարարության, «Կրթության զարգացման և նորարարությունների ազգային կենտրոն» հիմնադրամի, Գնահատման և թեստավորման կենտրոնի, Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի, մարզային և համայնքային գրադարանների, Արմավիրի տարածքային մանկավարժահոգեբանական աջակցության կենտրոնի, «Դաավանդի՛ր, Հայաստան»-ի, այլ դպրոցների և հասարակական կազմակերպությունների հետ: 2) Դպրոցի մանկավարժական, աշակերտական, ծնողական անձնակազմները ներգրավված են միջոցառումներին՝ շաբաթօրյակ, ծառատունկ, սեմինարներ և այլն: 3) Արտադրարոցական աշխատանքների իրականացման ժամանակ տարվում են աշխատանքներ՝ ծնողական համայնքի ներկայացուցիչների հետ, իրականացվում է վերջիններիս ներգրավումը համայնքից դուրս կատարվող նպատակային այցերում:	աշխատանքները կազմակերպվում են մանկավարժական անձնակազմի կողմից:
Ուսումնական հաստատության ուսումնական միջավայրը	
1) Դպրոցում պարբերաբար կազմակերպվում են ցուցահանդեսներ: 2) Ապահովված են սովորողների առողջության ու անվտանգության պահպանման նորմերը, մշտապես հսկվում է տարածքի սանիտարահիգիենիկ վիճակը	1) Դպրոցի մուտքը և միջանցքները կահավորված չեն տեղաշարժման սահմանափակումներ ունեցող անձանց համար նախատեսված հարմարություններով (թեքատախտակներ):

Մանկավարժական համակազմի մասնագիտական որակները

- 1) Դպրոցի բոլոր ուսուցիչները՝ բացառությամբ երեքի, ունեն բարձրագույն մասնագիտական կրթություն և ատեստավորված են:
- 2) Դպրոցի մանկավարժական անձնակազմը մասնակցում է մասնագիտական որակավորումների բարձրացմանն ուղղված դասընթացների, սեմինարների և վեբինարների:
- 3) Մանկավարժական համակազմում առկա է «Դաավանդի՛ր, Հայաստան» ծրագրի ուսուցիչ :

- 1) «Տարվա լավագույն ուսուցիչ» և մասնագիտական այլ մրցույթների, տարակարգի ստացման, կամավոր ատեստավորման մասնակցության պասիվություն: Բարձրագույն կրթություն չունեցող ուսուցիչները պատրաստվում են կամավոր ատեստավորման:

Ուսումնական հաստատության տրամադրած կրթության որակը՝ չափորոշչային պահանջներին համապատասխան

- 1) Ուսումնական հաստատությունում երաշխավորված է երեխաների կրթություն ստանալու իրավունքը: Աշխատանքներ են տարվում արդի կրթական մեթոդների կիրառման ու կրթական տեխնոլոգիաների տեղայնացման ուղղությամբ, փորձ է արվում՝ քայլել ժամանակին համահունչ:
- 2) Իրականացվում է ռազմահայրենասիրական դաստիարակություն, մարդկային արժեքների ամրապնդում, երեխաների ստեղծագործ կարողությունների բացահայտում:
- 3) Ուսման որակը բարելավելու համար, մեծ աշխատանքներ են տարվում, զարգացնել սովորողների հմտությունները, կարողություններն ու դիրքորոշումները, պահպանել առողջությունն ու անվտանգությունը :

- 1) Մարզային և հանրապետական օլիմպիադաների մասնակցության ոչ բավարարողություններ:

4) Շարունակաբար կազմակերպվում են դասարանական, արտադասարանական ու արտադպրոցական նպատակային միջոցառումներ, այցեր թանգարաններ և մշակութային ժամանցի կենտրոններ, որոնց շնորհիվ սովորողների մոտ զարգանում են ճանաչողական ակտիվությունը, գեղագիտական ճաշակը, մշակութային զարգացվածությունը:	
Ուսումնական հաստատության կողմից օգտագործվող SCS և կրթական այլ տեխնոլոգիաները, կիրառվող նորարարությունները	
1) Դպրոցն ունի քիմիայի, ֆիզիկայի և կենսաբանության լաբորատորիաներ: Քիմիայի և կենսաբանության լաբորատորիայի՝ նոր գույքով համալրումն ընթացքի մեջ է:	1) Դպրոցի լաբորատորիան ունի վերանորոգման և անհրաժեշտ քիմիական նյութերի և փորձերի իրականացման սարքավորումների կարիք: 2) Դպրոցի ողջ տարածքում անհրաժեշտ է ապահովվել ինտերնետային կապ: 3) Սովորողների տեխնոլոգիական կրթությունը իրականացնելու համար անհրաժեշտ է համակարգչային կաբինետի նորոգում և համակարգիչներ, որտեղ մշտապես կկազմակերպվեն դասապրոցեսներ՝ SCS կիրառմամբ:
Ուսումնական հաստատության բազմակարծիք, ներառական և մասնակցային արժեքային միջավայր	
1) Դպրոցում սովորողների իրավունքների և շահերի պաշտպանության ուղղությամբ անձնակազմի և շահառու այլ կողմերի ջանքերով՝ առանձին քննարկումների ընթացքում ներկայացվում են սովորողների իրավունքներն ու պարտականությունները:	1) Սովորողների իրավունքների ու պարտականությունների ոչ բավարար իմացություն: 2) Դպրոցում կազմակերպվող միջոցառումների նկատմամբ պասիվություն :

2) Դպրոցում երաշխավորված են թե՛ աշակերտական, թե՛ մանկավարժական կոլեկտիվի իրավունքները: 3) Դպրոցի ողջ անձնակազմի կողմից աշխատանքներ են տարվում Դպրոցում բռնության ու հալածանքի (բուլինգ) ցանկացած ձևի կանխարգելման ուղղությամբ, սովորողների շրջանում բացատրական աշխատանքներ են տարվում ցանկացած հիմքով (արտաքին տեսքի, սոցիալական դրության, ծնողների կարգավիճակի, ազգային պատկանելիության) խտրական վերաբերմունքը բացառելու ուղղությամբ: 4) Մանկավարժական անձնակազմի ուշադրության կենտրոնում է ԿԱՊԿՈՒ սովորողների հետ աշխատանքը, : 5) Դպրոցում առկա է սովորողների ինքնաարտահայտման ու ինքնադրսևորման, սոցիալական անհատի ձևավորման պայմանները:	
Ուսումնական հաստատության աշխատակազմի արժևորման, խրախուսման և ինքնակրթության հնարավորությունները	
1) Դպրոցը կառավարվում է կրթության գործում մանկավարժական անձնակազմի դերի արժևորման ու կարևորության գիտակցումով:	1) Դպրոցի անձնակազմի ոչ բոլոր անդամների մոտ է դրսևորվում ինքնակատարելագործման և ինքնակրթության դիրքորոշում : 2) Կամավոր ատեստավորմանը մասնակցելու պասիվություն:
Ուսումնական հաստատության ուսումնական նպատակով կատարված ծախսերը	
1) Դպրոցի ֆինանսական հնարավորությունների սահմաններում մշտապես ֆինանսներ են ուղղվում նյութատեխնիկական բազայով հագեցվածության	1) Դպրոցի ծախսերի մեծ մասն ուղղվում է աշխատավարձի ու դրան հավասարեցված վճարներին, ինչպես նաև Դպրոցի պահպանման

բարձրացմանը, ՏՀՏ նոր միջոցների ձեռք բերմանը:
2) Ուսումնական նպատակով կատարված ծախսերը միանշանակորեն նպաստել են ուսումնական դասապրոցեսի կազմակերպման արդյունավետության բարձրացմանը:

ծախսերին (էլեկտրաէներգիայի վճար, ընթացիկ վերանորոգում)՝ սահմանափակ են Դպրոցի նյութատեխնիկական բազայի հագեցվածությանը միջոցներ հատկացնելու հնարավորությունները:

3. Ուսումնական հաստատությունում առկա հիմնախնդիրները՝ ըստ առանձին ուղղությունների.

Շենքային պայմաններ	🔔 Դպրոցը ամբողջությամբ ունի վերանորոգման կարիք, միայն տանիքը հիմնովի նորոգված է, 🔔 Դպրոցի երկու բակի վերանորոգում, 🔔 Դպրոցի տարածքում գտնվող արհեստանոցի վերականգնման աշխատանքներ, 🔔 Դպրոցի մարզադաշտի ցանկապատում և տարածքի բարեկարգում, 🔔 Դպրոցի ապաստարանի բարեկարգում, 🔔 Դպրոցի շուրջօրյա ջրամատակարարման կազմակերպում,
Նյութատեխնիկական բազա	✓ նոր գրականություն ձեռք բերելու անհրաժեշտություն, ✓ համակարգչային տեխնիկայի ձեռք բերում, ✓ էլեկտրոնային աղբյուրներից օգտվելու հնարավորությունների ստեղծում, ✓ աշակերտական և համակարգչային սեղանների ձեռք բերում,
Կառավարման և խորհրդակցական մարմիններ	📖 շրջանավարտների խորհրդի ձևավորում, 📖 կառավարման և խորհրդակցական մարմինների հետ ակտիվ համագործակցություն, 📖 խորհրդակցական մարմինների նախաձեռնողականության բարձրացում,
Մանկավարժական համակազմ	📖 մասնագիտական որակների և դասավանդման մեթոդների կատարելագործում, 📖 մասնագիտական մրցույթների մասնակցության ապահովում ,նայև տարակարգերի և կամավոր ատեստավորման մասնակցություն,
Աշակերտական համակազմ	🔔 սովորողների առաջադիմության բարձրացում, մասնագիտական կողմնորոշման աջակցություն,

	 սովորողների մոտ ինքնակրթության և ինքազարգացման մոտիվացիայի ստեղծում,
Ծնողական համակազմ	✓ ծնողական համակազմի մասնակցության պասիվություն դպրոցական և արտադպրոցական նախաձեռնություններին, ✓ ծնողների կողմից էլեկտրոնային դասամատյաններում երեխաների առաջադիմության հսկողության պակաս,
